

3728

1910

281.6

b-81

1910

y-s w41

2010



8001

№ 9

Հ Ա Շ Ի Ւ

ԵՐԵՒԱՆԱՅ
ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐՀ
ՄԱՅՐ-ԵԿԵՂԵՑԻՈՅ

յնթացս 1909 թուի:

ԵՐԵՑՓՈԽ ԳԻՄԻՑՐԻ ՄԻԽԱՅԻԼՎԻԶ ՊԱՊՈՎ



370
2132-20

1910
Տպարան Եմին Տե-Գրիգորեանի
Երևան

Ժ Ե Ա Հ Ա

Պ Ե Ա Խ Ա Վ
Զ Ե Ր Ա Խ Ա Վ Ա Խ Ա Վ
Ֆ Ո Ւ Ա Խ Ա Վ Ա Խ Ա Վ

Տ Ի Մ Ա Խ Ա Վ

Դ Ի Մ Ա Խ Ա Վ Ա Խ Ա Վ

281-G
5-81

40
32-24

100
15412

№ 9

Հ Ա Շ Ի Կ

Ե Ր Ե Խ Ա Ն Ա Յ
Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Խ Ո Ր Ի Զ
Մ Ա Յ Յ Ր - Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Յ

Հ Ա Ց Ա Գ Ս 1909 թ ու ի :

Ե Ր Ե Ց Փ Ո Խ Գ Ի Մ Ի Տ Ի Բ Մ Ի Խ Ա Վ Լ Ո Վ Վ



1910

Տպարան Էմին Տեր-Գրիգորեանի
Երևան



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ամեն ազգի առաջադիմութեան հաս-
տակ նաև պարհանձն է խօսովանել իր
բարոյական ցաւերը եւ առանց ծածկե-
լու դեմք դրանց նրապարակի վրա:

Նահապիդ:

Բոլոր լուսաւորեալ երկրներում, որ կողմ որ նո-
յեք, ամեն մի հիմնարկութիւն կամ ամեն մի պաշտօ-
նայ, լինեն գրանք պետական կամ հասարակական,
ենթարկուած են որոշ հսկողութեան, պատասխանատուու-
թեան խրեանց գործավարութեան համեմատ և ինչքան
բարձր է պաշտօնը, այնքան մեծ է պատասխանատուու-
թիւնը։ Մինչդեռ մեզանում այսպիսի բանի վերաբե-
րեալ գիտակութիւնն անգամ, կարծես, ծաղրի է ենթար-
կուած։

Թերթեցէք մեր գրեթէ ամենօրեայ պարբերական
հրատարակութիւնները և կգտնէք, որքան ծանր գի-
տակութիւններ և մեղադրանքներ կան թէ մեր ազգա-
յին և թէ հոգեսր հիմնարկութիւնների կամ հասարակա-
կան գործիչների դէմ և ամեն ինչ մնում է անուշադիր
և նոյն գրութեան մէջ...։

Բողոքում ես քահանայից՝ նրան պաշտպանում է
Կոնսիստորիան, Կոնսիստորիայիցն ես գանգատաւոր՝
նրան հովանաւորում է Սինօդը. Սինօդից ես անբաւա-
կան՝ նրան էլ պաշտպանում է Կաթողիկոսը... Եւ այդ-
պիսի կամայականութեան շնորհիւ ընկնում է հոգես-
րականութեան նշանակութիւնն ու պատիւը և վատնը-
ւում են ժողովրդական գրամմերը։

1910 թ.

Տիոգրաֆիա Էմինա Տեր-Գրիգորյանց,
գոր. Երևան.

Վանքը կամ եկեղեցին, որ մի ժամանակ զիտութեանց, լուսաւորութեան կմսպրոներ են եղել հայ ժողովրդի համար, այսօր, շնորհիւ տգէտ հոգևորականութեան, ընկել են իրենց բարձր, գաղափարական նշանակութիւնից և ներկայումս տարւայ ընթացքում չի լուսում նրանց բեմերից մի կենդանի խօսք կամ քարոզ անգամ: Եկեղեցին զառել է մեր հոգևորականութեան համար միայն ծիրակատարութեանց պաշտօնավայրը *): Հայ ժողովրդի միակ պարտականութիւնը դէպի եկեղեցին ներկայումս, կարծես, կայանում է նրանում, որ քահանաներին և տիրացուներին միջոց տայ ապրելու:

Բայց հարց է առաջ գալիս. ինչի՞ են պէտք այդպիսի հոգևորականները կամ Աստծուն կամ մարդկանց: Հայ ժողովրդը տարեկան միլլիոններ է ծախսում հոգեռականութիւնը պահելու համար, իսկ եթէ զբա կէսի կէսը ծախսէր լուսաւորութեան, զիտութեան, արհեստներ տարածելու համար, որքան մենք առաջ գնացած կլինէինք: Բայց քանի որ մեզ անսպայման հարկաւոր են եկեղեցիներ, այնուամենայնիւ մեզ իսկի հարկաւոր չեն տգէտ կամ անամօթ հոգևորականներ: Բայց ինչպէս վարւել այն զէսպում, երբ ամեն մի ակեղ, յանցաւոր վարմունք հոգևորականի՝ թողնում է անուշադիր: Այս բանի վրայ թող մտածէ ինքը հասարակութիւնը:

Այս իմ փոքրիկ հաշիւը պիտի զարմացնէ, առջեցնէ սախն, թուրքին, կաթոլիկին, բողոքականին, հրէտյին, քրդին, բայց, համոզւած եմ, ոչ մի ազգեցութիւն չպիտի թողնի հայի վրայ, որովհեան այդ աստիճան ընտելացել ենք մենք այս տեսակ չարիքների հետ:



*) Չեմ ուզում խոսել զոհազան տեսակ մոտիվազայտութեանց մտախն, որոնք մուտք են գործել մեր եկեղեցում, շնորհիւ ժամանակի ոչ պակաս տգէտ հոգևորականութեան:

Մ Ո Ւ Տ Տ Ք

Յունիսի 12-ից 1909 ամի մինչեւ 1-ը յունիսի 1910 ամի մոմականառաջիւնից ստացել է 548 ր. 91 կ.

Մուտքը մոմականառութիւնից գրւել է շարաթէ շարաթ 45 համարաւ: Համարների թիւը պիտի լինէր 52-53, բայց որպէսեակ Կոնսիստորիայի և Սինօդի անտարերութեան շնորհիւ քաջալերած քահանաները ժամանացութիւնները սրտի ուզած օրն էին կատարում, ժողովուրդն էլ միանգամայն դադարել էր ժամը յաճախելուց, ուստի և շարաթական եկամուտն էլ երբեմն համում էր զէրօյի, այդ պատճառով պախանել է, որ 2 շարաթուայ եկամուտը մոմականառութիւնից գրւել է մի անգամ:

Զանիկ վառելուց

- | | |
|--|-------|
| 8 ջան Գանիելեանցի ամուսնոյ թաղման . | 17 ր. |
| 3 ջան Արրանամ Տէր-Արիստակէսեանի թաղման 8 ր. | |
| 1 ջան (պատկի) Տէր-Խաչատուրի միջոցաւ . | 2 ր. |
| 1 ջան Տէր-Թաղէսուեան Գուրգէն . | 1 ր. |
| 5 ջան գիմնազիայի աշակերտների կողմից ու հաղորդութեան օրը . | 9 ր. |
| 2 ջան պրօգիմնազիայի աշակերտուհների կողմից ու հաղորդութեան օրը . | 3 ր. |
| 1 ջան Արշակ Վարդանովի թաղման . | 2 ր. |
| 1 ջան Գրիգոր Աղբաղվի տղայի թաղման . | 2 ր. |
| 1 ջան Մարտիրոս Մ.-Բաղալեանի թոռան թաղման 2 ր. | |
| 1 ջան պ. Բագրատ Վարդանեանից . | 2 ր. |

Գրիգոր ա. ք. Սուքիասեանցը ստացել էր պ. Արշակ Սարգսեանից (պ. Խանազաղեանի գործակատար) և պ. Մ. Տէր-Մկրտչեանից 14-15 բուր. ջահերի և մոմբի գինը ինձ հասցնելու համար, իսկ ես մինչեւ այսօր մի կոպէկ էլ չեմ ստացել նրանից։ Գրւեցին բոզոքներ ուր հարկն էր—բալորը զուր անցան։

Լուսագինը մկրտառթեսաց

| | |
|---------------------------------------|---------|
| Զրօրհնէքին խաչի քաւոր Հ. Միքոյեանից | 5 ր. |
| Տէր-Ղեոնդի միջոցաւ Յակով Ս. Դավթեանից | 1 ր. |
| Պ. Յարութիւն Թագէսսեանից | — 50 կ. |
| Պ. Պետրոս Յովհաննիսեանից | 1 ր. |
| Տէր-Խաչիկի միջոցաւ | — 20 կ. |
| Պ. Ստեփան Գէորգեանից | — 40 կ. |
| Տէր-Ղեոնդի միջոցաւ | — 50 կ. |
| Տէր-Ղեոնդի միջոցաւ | — 20 կ. |

Լուսագինը տօնից

| | |
|--|--------------|
| Դանարացէքին աշակ. Գրիգ. Կարապետեանից | 5 ր. |
| Լուսագին Ծննդեան և յօդուտ աղքատաց | 70 ր. 85 կ. |
| Լուսագին Զատկական և յօդուտ աղքատաց | 49 ր. 55 կ. |
| Զատկական մտապագին | — 52 ր. 2 կ. |
| Երեանայ Բարեգործական Ընկերութիւնից ա. Զատկին և ս. Ծննդեան աղքատներին բաժանելու | — 30 ր. |
| Պ. Եղիազար Ֆահրապէիչ Եղիազարեանից | 25 ր. |
| Պ. Աղաջան Արշակունուց՝ կտրան փչացած երկու տեղ նորոգելու | — 3 ր. |

Լուսագինը պատկաց

| | |
|----------------------|---------|
| Տէր-Վրդանէսի միջոցաւ | — 50 կ. |
| Տէր-Սիմէօնի միջոցաւ | — 25 կ. |

| | |
|--|---------|
| Տէր-Սիմէօնի միջոցաւ | — 50 կ. |
| Տէր-Ղեոնդի միջոցաւ | — 50 կ. |
| Տէր-Ղեոնդի միջոցաւ | — 30 կ. |
| Տէր-Կորիւնի միջոցաւ | — 50 կ. |
| Տէր-Անդրանիկի միջոցաւ | — 50 կ. |
| Պ. Հայրապէտ Թոռթոլեանցից (իր պսակաւ դրութեան) | — 1 ր. |

Լուսագինը) լծակինն

| | |
|--|---------|
| Պ. Հայրապէտ Աւետիսիսեանից | — 50 կ. |
| Մկրտիչ Մուշեղովի թաղման (Տէր-Սիմէօնի միջոցաւ) | — 1 ր. |
| Արշակ Վարդանովի թաղման | — 1 ր. |
| Պ. Գրիգոր Աղբաղվի թաղայի թաղման **) | — 50 կ. |
| Պ. Մարտիրոս Մ.-Բագալեանից | — 40 կ. |
| Պ. Բագրատ Վարդանովից (իր քրոջ թաղման) | — 60 կ. |

*) Խնչպէս երեւում է, ներկայ հաշվից՝ գանական բւասպիններն առացւած են դիմաւորապէս մրսն և ենթեցների բանաների մոջոցաւ։ Տէր-Վեռնդի միջոցաւ ստացել է 5 անգամ միայն և բնամենը 2 ր. 50 կ., իսկ Տէր-Գրիգորից եւ ոչ մի անգամ։ Միթէ այս վերջին երկու բանանների ծովելիքի մոջի եղիք մկրտութեն, պահի, անտառատոն կոմ մահ մի ամրոջ տարեայ բնելացրում։

**) Երբ միք (իմ եւ հոգաբարձութեան եկեղեցւոյ) մի բանի տաճնեակ բողոքները բանանների մասին մատնել են ծաղրական լուսթեան Կոնսիսորիայի, Ախնօսի և Տեղակալի կողմից՝ ստիպւած եղանը մի մեծ ժողով (ծխականներից եւ բաղադրիներից) կայացնել եկեղեցում, եկեղեցու ցաւերը յայտնելու իրենց Այդ օրը պ. Համբարձում Աղեղնանք բողոք էր յայտնել իմ դիմ, Տէր-Գրիգորի միջոցաւ, որ նու տեղ էր ինձ պ. Գրիգոր Աղեղնակի կողմից 13 ր. 40 կ., իսկ ես նշանակել էի մատեանում 2 բուր. ջահի դիմ եւ 50 կ. լուսագին։ (Յս ամսն տարի տակել եմ եկամտաւոն ու ձախոր յայտնանէ անուն, որպէս

Կաղուածներից և ռազիշ աղքիւրներից

Մի տարի ու կիսուայ եկեղեցապատկան
տան վարձ մինչև սեպտեմբերի 1-ը 1910 ամի
պ. Ստեփան Սիմոնվիլց 52 ր.

Եկեղեցաթայ այգուց մի տարուայ վարձ
Կապալսու պ. Գասպ. Գէորգովից (1909 թ.) 55 ր.
Պ. Համբ. Մալխասովից պղինձի վարձ*) 5 ր.
Պ. Երւանդ Աֆրիկանից աղիւսների գին 1 ր.

ՄՈՒՏՔ ԵՂԵԼ է ԸՆԴԱՄԵՆՆ 965 ր. 45 կ.

զի միջաց տուած լինեմ ամեն մէկին կանտրավեօք լինելու իմ
միջացաւ կառարած ելից եւ մաֆց): Այդ օրւայ ժարավին ևս ոչ
մի պատասխան չկարսպայայ տալ Տէր-Գրիգորին, որովհետեւ մի
այդպիսի ակներիւ մնալաբանք բնձ համար միանգամայն ան-
սպասելի էր: Սննիքամեջտ էր ինձ համար պարզելու այդ: Խնձ-
րան եղաւ գարմանք, երբ եղած հաշիններից սուսւեց, որ այդ
մնալաբանքը եղել է շինձու, բոլիչապէս մոլորեցնելու ժողո-
վականներին, եւ երբ միւս օրը ևս 6 պատւառը մարդ ուղար-
կեցի բնիերական գատի կանչելու այդ շանսամի գլւ, պ. Համ-
բարձում Ավղինանը կամք չըր յայտնում գատի գալու: Վերջը
զուով կանչել տակ Կոնսիսորիայ, սրտեղ հասկացրին իրեն իր
տղեղ վարմանը: Բանք նրանումն էր, որ բացի ջանից և լու-
սավնից, մոմի սեղանից վերցրել էին թափան օրը մաներ բանանա-
ներին, տիրացուններին և բազմութեան բաժանելու համար.
վասել էին 12 հաւա մնձ մամեր ո. Սեղանի վրայ եւ գիտանա-
նի կողքին 4 մնձ մոմ: Մյուսեղ պ. Հ. Ավղինանը շնակացող
ձեւացաւ, երբ իրան հասկացրին, թէ երեցփոխը չի կարող ամեն
մարդու անունը գրել, ում ինչքան մոմ է ծախում, ինչպէս որ
ինքը, պ. Համբարձում Ավղինանը, իր դաւթարի մէջ չի մրտ-
ցնում իրանից առուտուր անողների անունները, կամ թէ ամեն
տիսակի մի եկամուտ դրւում է իր սուսնին ցանկում: Վերջը
իմացւեց, որ պարոնը ինչ որ աղքական է եղել Տէր-Գրիգորի...

*) Ավղինանը պարտ էր պ. Հ. Մալխասնանին 25 բար.,
վարձուած է նրան բնամնն 20 ր. մնում է տաղու ևս 5 ր.

ԵԼՔ ԿԱՄ ԾԱԽՔ

| | |
|--|-------------|
| 1909 թ. ընթացքում առնուած է ընդամենն | |
| 3 փութ 33½ ֆ. մոմ և վճարուած է 184 ր. 20 կ. | |
| Ռոճիկ աիրացաներին առարուայ ընթացքում 229 ր. — | |
| Աղքատ ընտանիքներին 19 անգամ բաժա- | |
| նուել է | 54 ր. 20 կ. |
| Զատկական մատաղ | 52 ր. 2 կ. |
| 1 փութ 30 ֆ. ալիւր | 5 ր. 35 կ. |
| 6 փութ ածուխ | 3 ր. 55 կ. |
| Կէս սամէէն վասելափայտ | 20 ր. — |
| 3 հատ պօլօվիկ | 4 ր. 80 կ. |
| 1 ֆ. կնդրուկ | 3 ր. — |
| 3½ կարագ և գոմ | 1 ր. 60 կ. |
| 3 ֆ. խունկ | — 60 կ. |
| Գործակալին ո. Միւսոն բերելու | 2 ր. — |
| 1908 և 1909 թ. թագաւորական հարկ Շէն- | |
| գալթայ այգւոյ | 16 ր. — |
| Վեհափառ Հայրապետին հեռագրեր և 15 | |
| փոշտի նամակ և այլն | 9 ր. 61 կ. |
| Եկեղեցում ժողով կայացնելու և կառավա- րութիւնից այդ առթիւ իրաւունք իւրն- | |
| գրելու համար 2 մարկայ | 1 ր. 50 կ. |
| 18 շապիկ լուանալու | 1 ր. 80 կ. |
| Քահանաների գասի տախտակամածին աւե- լացրած 2 տախտակի համար | 2 ր. — |
| Եկեղեցւոյ 3 կողմ մայթեր և առուններ ուղղելու | 12 ր. 60 կ. |
| 1908 թ. հաշւէտեարներ և հրաւիրաթերթեր ապելու | 29 ր. 50 կ. |
| Եկեղեցապատկան տան պատշգամբը նորո- գելու | 10 ր. — |

| | |
|---|------------|
| Տէր-Ղետովի շուրջառ կարկատելուն | 1 ր. 20 կ. |
| Բաննահներին, մշակներին, ցեմենտին | 6 ր. 25 կ. |
| Արտաքնոց մաքրելու | 3 ր. — |
| 3 ցինկէ պլակատին | — 90 կ. |
| 2 պաշկայ փոշտի թուղթ յայտաբարութիւն տպելու | 1 ր. — |
| Երկաթագործին արեելեան ըակի գուռը վե- րանորոգելու | 9 ր. 25 կ. |
| Պ. Խորասանովին երկաթի և ներկի | 5 ր. 23 կ. |
| Պ. Յովհաննէս Քոչարովին վերջին մնացած պարտքից (այլ ևս եկեղ. նրան պարտ չէ) | 10 ր. — |
| Պ. Եղիազար Ֆահրատիչ Եղիազարեանցին (իր նուէրի համաձայն) վճարուած է հա- մարում եկեղեցւոյ պարտքը | 25 ր. — |

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

21-ին ապրիլի 1910 թ. ք. Երեւան:

Մենք ներքոյ ստորագրողներս զննելով երեան
քաղաքի ո. Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ 1909 թ. հա-
շվէմատեանը, գտանք հետևեալը: Յիշեալ թւին երեց-
փոխ պ. Դիմիտրի Պալովի ձեռքով ընդհանուր մուտք
եղել է 965 ր. 45 կ., իսկ եզր՝ 706 ր. 6 կ.: 965 ր. 45 կ.
մտից գումարից հանելով 706 ր. 6 կ. ծախքը, մնում է
առ 1-ն յունւարի 1910 ամի 259 ր. 39 կ.: Եկեղեցին
առ 1-ն յունւարի 1909 ամի ունեցել է պարտք 629 ր.
48 կ., որից գուրս եկած կանխիկ զրամ մնացած՝ յի-
շեալ 259 ր. 38 կ. մնում է Եկեղեցին պարտ վճարելու
առ 1-ն յունւարի 1910 թ.—380 ր. 9 կ.

Անդամք հոգարարձուք՝

| | |
|---------------------------------------|------------------|
| Պետրոս Յովհաննիսեան | Աղաջան Արշակունի |
| Գործակալ Երեանի Սիմեօն ք. Արշամամեան: | |

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Զորբորդ անդամ նորից երեցփոխ ընտրւելուցու մի
ապրի չանցած, հաստատ վճռել էի այլես չշարունակել
պաշտօնու, որպէս զի այլես գործ չունենամ այսպէս
կոչւած մեր հայ-լուսաւորչական քահանաների, կոնսիս-
տորիայի, Սինօդի, Կաթողիկոսի և նրա Դիւանի կազ-
մի հետ: Կարծեմ որ բաւական էր 2-3 տարի շարունակ
մաքրել, կուել անարդարութեանց, անամօթութեանց
և յանցագործութեանց գէմ, հարիւրաւոր թերթեր մրո-
ւել թանաքով և վերջը այդ բոլորի արդիւնքը տեսնել
գերեզմանային «խորին լուսութիւն», իբրև պատասխան
սուրբ, սրբազն և սրբազնագոյն հայրերի կողմից:

Այս բարձր հանգամանքները ինձ մտածել էին տալիս:
«կամ ևս եմ յիմարացել և կամ խեղճ հայրերը շեղւել
են խրեանց ուխտեալ ծրագրից»: Այսպէս թէ այնպէս,
այս երկաւ հակառակ ուղղութեանց ծառայողներս իրար
չպէտք է հասկանայինք և գործը աւելի վատ կերպա-
րանք պիտի ստանար, ուստի աւելի բարւօք համարե-
ցի հրաժարւել միանգամայն ընդմիշտ պաշտօնիցու, մա-
նաւանդ որ այդ երեցփոխանական պաշտօնու տաս տար-
ւայ ընթացքում թէպէտ եկեղեցւուն տեղ էր մեծ օգուտ,
բայց ինձ, անձնականապէս, բացի նիւթական փասից,
հոգեկան անհանգստութիւնից, արեան պղտորումներից
ոչ մի լաւ բան չէր ցոյց տեղ...

Որպէս զի ևս բարձրասողի կամ զրպարաչի գեր կա-
տարած չինչի, բողոքիս մասնակից արի ոչ թէ մինչև
այսօր չկազմակերպւած եկեղեցւոյ աննշան ծուխին մի-
այն, այլ նաև Երեան քաղաքի հայ հասարակութեանը,
որի շնորհիւ կասուցւել, զուգւել զարդարւել և պճնել

Էր ս. Լուսաւորիչ եկեղեցին: Իմ կոչին, պէտք է խոստովանել, անտարբեր չմնաց Երևանայ յարդելի հայ հասարակութիւնը: 1909 թ. մայիսեան ժողովին հաւաքւել էին մօտ 300-400 հոգի, որ չլուած և չտեսնւած րան էր այդպիսի բազմամարդ ժողովը Երևանում: Առաւաւայ ժամի 11-ից մինչևի ժամի 4^½-ը երեկոյեան շարունակեց այդ ժողովը: Ավ որ Երևանցիներին ձանաչում է, անհաւատալի կթւայ, որ կարող էր տեղիք ունենալ այդպիսի մի մեծ ժողով:

Ես և քահանաներս մինչեւ այդ՝ չափեց դուրս լույ յարաբերութիւնց մէջ էինք իրար հետ, ես նրանց միշտ ցոյց էի տալիս ամենախորին յարգանքս և բարիացակամութիւնս, կատարում էի ամեն մի նրանց կապրիզն անդամ, միայն մի պայմանով, որ եկեղեցին պայծառ պահւի, ժամասացութիւնը կամոնաւոր: Բայց այն օրուանից, երբ Կոնսիստորիան արգելեց ինձ գիւղի քահանաներ վարձով պահել եկեղեցում և Տէր-Ղեոնդ Աթանասիանցն էլ անվայիլ ձերավ եկեղեցւոյս միարան նշանակուեց, այդ օրուանից ամեն մի կարգ ու կանոն ուորի տակ գրւեց և սկսւեցին ամենախայտառակ և զգւելի գործողութիւններ և անկարգութիւններ:

Մսերէն ասում են. „Դրյաբա—դրյաբօյ, ա ըլյաբա—ըլյաբօյ“.

Հասարակութիւնն արգարացի պահանջի, ճնշման և ազգեցութիւնն տակ ևս մէկ կողմը զրի անձնականս և սկսեցի կարգի հրաւիրել քահանաներին:

Քահանաներն էլ շատ լաւ ճանաչելով իւրեանց պետէրի նկրողամիտ հոգին, ուղղւելու տեղ աւելի վատաթարացան: Միանգամայն կիսափակ էր մնացել եկեղեցին. ժողովուրդը համբերութիւնից դուրս եկած, դադարել էր ժամ յաճախելուց, որայ շնորհիւ եկեղեցին հետզհետէ զրկում էր իր եկամուտից: Ինչպէս հաշւեցս արդէն երևում է, եկեղեցւոյ եկամուտն սկսեց այն չափ պակասել, որ հնարաւորութիւն չէր մնացել ընթացիկ

ծախուերը ծածկելու: Ես ստիպւած էի յետ կանգնել մեր քահանաներին մի անգամ ծրագրած ամսականներ վճարելուց:

Ահա այդ օրւանից սկսեց տրագիկոմէգիան:

Քահանաները՝ Տէր-Գրիգոր Սուքիասեանն և Տէր-Ղեոնդ Աթանասիանը, թէ րանաւոր և թէ գրաւոր ըռդուքներով և անպատկան բառերով ձանձրացրել զգւեցրել էին ինձ, իսկ ես ամեն անգամ կրկնում էի նրանց իմ կտրական պատասխանո: «Մինչև այսօր ես իմ յօժար կամքով և պատասխանաւութեամբ, քանի որ եկեղեցին պայծառ էր և կամուռն էլ կանոնաւոր, ամենայն ուրախութեամբ վճարում էի ամսականներով և մինչեւ անգամ հետզհետէ աւելացնում, իսկ այսուհետեւ թող ժողովը ինքը վճռի ձեր վարձը, քանի որ եկեղեցին միջոց չունի»: Բայց քահանաները այնքան էլ միամիտ չէին. ժողովուրդը ուզում էր երկուսին էլ հետացնել ս. Լուսաւորիչ եկեղեցւոց, ուստի չէին համաձայնիլ զրա առթիւ ժողով գումարելուն:

Տէր-Գրիգորի այդպիսի զրութիւններից մէկը ևս ուզարկել էի Մինօդ, բայց Մինօդը ոչ միայն ուշադրութիւն անգամ չդարձրեց այդ բողոքին, այլ մինչեւ այսօր չի վերադարձրել ինձ իմ փաստաթուղթս:

Ես և եկեղեցւոյ հոգարարձութիւնը քանի քանի բողոքներ էինք զրել այդ քահանաների մասին կոնսիստորիային*), Տեղակալին, Մինօդին: բայց և մեր բոլոր բողոքները մնում էին «Ճայն բարբառոյ յանապատի»:

Իմ զրած բողոքներից մէկը Մինօդը վերադարձրել էր Կոնսիստորիային, իսկ Կոնսիստորիան էլ փոխանակ քննութիւն կատարելու բողոքիս, պատճէնը տևել էր Տէր-Գրիգորին գատարան ներկայացնելու համար, բայց

*) Կոնսիստորիան բոլոր իմ ևս հոգարարձութեան բողոքները մնում էր անկատար, իսկ քահանաների ամեն մի անմիտ դրութիւնը իսկոյն ուղարկում էր ինձ քացատրութիւն տալու:

դատի օրը, գժբաղտարար ինքը, Տէր-Գրիգորը, չներկայացաւ դատաւորին:

Եւ ահա այսպէս զանազան տեսակ անվայել վարմութիւն և գործողութիւնների թիւը հասել էր 33-ի, երբ ևս մայիսեան ժողովին զեկուցեցի այդ մի առ մի ժողովին ներկայ էին նաև քահանաները: Ժողովականները ապշել էին իրենց բոլոր լսածներից: Երկար վիճաբանութիւններից յիտոյ 8 պատուաւոր քաղաքացիներ ընտրւեցին (թէ ծխականներից և թէ քաղաքացիներից) եկեղեցու գրութիւնը քննելու, համարելով զրանց վճիռը պարտաւոեցուցիչ երկու կողմի համար էլ: Կազմւեց արձանագրութիւնը, ստորագրւեցին 60-70 հոգի և, ուշ լինելու պատճառով, շատերը չկարսղացան ստորագրւել:

Ընտրւած պարոններն էին. 1) Նիկիտ Արտեմիչ Տէր-Սարգսեան, 2) Սիրական Գրիգորիչ Տէր-Մարտիրոսեան, 3) Հայկ Վաստովիչ Յովհաննիսեան, 4) Արշակ Նիկիտիչ Յալովիրեանց, 5) Յովհաննէս Նազարէթեան, 6) Պողոս Գրիգորիչ Պողոսեան, 7) Ստեփան Վարդանիչ Ղարիբեան և 8) պ. Արշակ Ճարակեան:

Քննիչ յանձնաժողովը, առանց երկար յիտաձգելու, շուտ սկսեց քննութիւնը: Կանչուած էին մօտ 40—50 վկայ բայց հրաւերին չներկայացան միայն քահանաները: Տէր-Գրիգորը, որ չամաչեց ժողովի օրը ժողովականներից մէկին դասից բարձրաձայն ոսերէն բառը առողջ հայհոյելուց, այս դէմքումն էլ չքաշեց քննիչ յանձնաժողովին մերազարձնել հրաւիրաթերթը թքած և թանաքոյլ գլխից մինչև վերջը խղի-բղի արած...

Ամեն մի հոգեորականն համոզւած է, որ իր սեղեցած ամեն լրբութիւններ անելուց յիտոյ, եթէ նեղ տեղն ընկնի, մի մեղայական կներկայացնի և ամեն բան կը ներուի: Ահա պատճառներից մինը, թէ ինչու հայ հոգեորականութիւնը գէպի խորխորատ է գլուրում:

Մեղաղբական թերթը ժողովուրդի կողմից հետեւալ 33 կէտից էր քաղկացած.

1) Հասարակ օրերը առաւօտ կամ երեկոնները ժամ չասելով:

2) Սովորական կիրակի օրերը պատարագ չասելու:

3) Տէրունական տօներին նախատօնաքններ չկատարելով:

4) Տէրունական տօներին՝ Համբարձման, Աւետման, Տեառն ընդ առաջին, ի յիշատակ մեսելոցներին, չէնց եկեղեցւոյ տօնին (Գրիգոր Լուսաւորչի մուտն ի վիրապ) և այլն՝ պատարագներ չանել:

5) Զատկին առաւօտաւոյ ժամ չեկած՝ պատարագ անելով:

6) Ժամասացութիւնների խայտառակ կրճատումները:

7) Ժամասացութիւնների անլուի և անհասկանալի ձեռվ կատարելով:

8) Ժամասացութիւնների ոչ օրինաւոր կատարելով:

9) Արգելք օգնական քահանաներին օրինաւոր ժամասացութեան:

10) Հոգաբարձութեան կողմից հրաւիրւած երգեցիկ խմբին գուրս վճնգելով:

11) Պատկաղբութեան հանգէսներ կիսատ-պռատ կատարելու առթիւ՝ եկեղեցում ծագած վէճ, կոխ, զալմազար:

12) Պ. Բարասովի հարսին ո. հազորդութիւն չտալը:

13) Հիւանդ երեխայի չմկրտելու պատճառով աէրտէրի և տատմօր մէջ ծագած խայտառակ կոխը, ապա հաշտելով.

14) Տէր-Համբարձումի աղջկան իւր հինգ ընկերներով չխսսառվանացնելով:

15) Բաքսականութեան առթիւ ծագած անրաւականութիւնները:

16) Ծաղկապարզի երեկոյեան ժամասացութեան

ժամանակ վառելիք մոմերի տիրացուի ձեռքից վերցնելը և բազմութեան ներկայութեամբ գետավ տալը:


- 17) Սպառնական խայտառակ նամակագրութիւնը:
- 18) Սուտ-սուտ լուրերի տարածելը:
- 19) Հրաւիրաթերթերի խլել տիրացուի ձեռքից, մայիսեան ժողով չկայացնելու մտքով:
- 20) Պ. Մեհերեանցի գդակի անհետանալը ժամում:
- 21) Մոմավաճառի սեղանից փողերի աներեսոյթանալը:
- 22) Մեսեալին 4 ժամից յետոյ թաղելը:
- 23) Պա. Արշակ Տէր-Սարգսեանից (պ. Խանազարանի գործակատար) և Տէր-Մկրտչեաններից լուսազների և ջահերի փողերի ստանալը և սեփհականացնելը:
- 24) Անվայել վարւեցողութիւն ժողովրդի հետ:
- 25) Տէր-Ղեոնդի Լուսաւորիչ եկեղեցում միարան զառնալու անվաւերութիւնը:

Եւ այլն և այլն և այլն:

Մարդ ամաչում է մինչև անգամ բոլոր եղելութիւնը մի առ մի նկարագրելուց կամ լոկ արձանագրելուց:

Քննիչ յանձնաժողովը 2-3 օր շարունակ քննութիւն կատարելուց յետոյ, կայացրեց հետեւալ վճիռը. «Ճանաչելով երկու քահանային էլ ֆնտակար ո. Լուսաւորիչ եկեղեցւոյ համար, հեռացնել եկեղեցուց, որոյ մասին ինքը ուր հարկն է».

Վերջապէս եկաւ նոր կաթողիկոս Մատթէոս Ա-ը. Ես ու պ. Աղաջան Արշակունին եկեղեցւոյ հոգարարձուն (իսկ միւս հոգարարձու Պետրոս Յովհաննիսեանը երեանում չէր) ներկայացնաք կաթողիկոսին. Վեհափառը մեծ ուշադրութիւնով լուսում էր մեզ: Մինք ներկայացրինք մայիսեան ժողովի արձանագրութիւնը և քննիչ յանձնաժողովի վճիռը մրոսած հրաւիրաթերթի հետ և ի միջի այլոց՝ յայտնեցինք նաև, որ պ. Պրօկուրօրն էլ բան չկարողացաւ անել տալ Մինօղականներին:



— 17 — Ա. ԱՅԱՍ ՎԱՀԱՐԱ. ԽԱՆՈՒԿԻ ՀԱՆՈՒԿ

Վեհափառը մեզ խոստացաւ խոր օճառ պատճեն ներկայացնել և մեր հրաժարականն էլ չընդունեց. առանձնատպէս շեշտելով պատերից մեզ շարունակել մեր պաշտօնը, իսկ ապագայ նոր թիւրիմացութիւնների դէպքում, հրամայից հազարեկի իրեն, որովհետեւ մենք հրաժարում էինք այնուհետեւ գործ ունենալուց այդ հիմնարկութիւնների հետ:

Այս բոլոր բողոքների առթիւ Տէր-Գրիգորը սպառնում էր մեզ խանչալով, ատրճանակով, որոյ մասին ստիպւած եղանք յայտնելու պաշտօնապէս պօլիցիային:

Միւս կողմից էր ժողովրդի մէջ զրգիռ էր առաջացել մեր հոգեոր իշխանութեանց զէմ և կարելի էր սպառնել ամբոխի կողմից մի որևէ անհաճոյ զէսքր...

Ի՞նչ էր իմ զրութիւնս. — մէկ կողմից սպառնալիք-ներ էին համառում ինձ, միւս կողմից ոչ պակաս սպառնալիքներ մի քանի հոգեորականների հացէին:

Եյանեղ էր թէն մեծ գժւարութեամբ, յաջողւեց ինձ խաղաղեցնել յուրաքանչիւնը:

Եւ ահա այդ չար օրերին տգեղ երեսյթները եկեղեցում, կարծես զիտմամբ, աւելի սաստկանում էին: Այդ ժամանակամիջոցին, 3-4 ամսուայ մէջ, 15 զեկուցագիր էր զրել Վեհափառին եկեղեցւոյ զրութեան վերաբերեալ: Գերեզմանային լուսթիւն:

Վերջը՝ հազիւ հազ՝ ստանում եմ Կաթողիկոսի Դիւանականի միջացաւ մի կարձ զրութիւն, որով յայտնում է աէրտէքների վերաբերմամբ շուտով կոնդակ ստանալու մասին և պատերառմ՝ նոր հարցեր չյարուցանել (Մինօդի և Կոնսիստորիայի զէմ):

Գալիս է Մատթէոս վարդապետը (Մինօդի անդամ) Կաթողիկոսի հրամանով գործը նորից քննելու և, ինչպէս վերջն իմացանք, նա մի առ մի հաստատել էր քննիչ յանձնաժողովի կատարած քննութեան ճշտութիւնը:

Բայց... բայց... օրհնուի այդ բայցը՝ քամակից կըպ-

ցրել էր Տէր-Գրիգորի ինչ որ մեր զուշակած մեղայականը հինգ մարզու ստորագրած խնդիրքի հետ միասին:

Այդ մեղայականի մէջ թափած արցունքներին հաւատագով Վեհափառը ներել էր նրան: Արանից յեսայ ասում էն, թէ այդ առթիւ մի կանգակ էր ստացւել մեր Կոնսիստորիայում, ի լուր ժողովրդան կարգալու հաշմար, բայց ոչ ոք չտեսաւ այդ կանգակը և ոչ ոք չի ժայցաւ նրա բավանդակութիւնը: Մինչի ճիմայ ոչ մի երեանցի հաստատ անդեկտիւն չունի Կաթողիկոսի կարգագրութեան մասին:

Զանցած մի քանի ամիս՝ Կոսիստորիան (գետ էլի Երևանը առանց առաջնորդի էր) ինչ որ ճրավան էր արձակել և մի միծ կողպէք գրել եկեղեցւոյ զբամարկով վբայ: Այդ բանը արդէն լրբարեան վերին աստիճանն էր: Իսկոյն հնապառվ բողոքեցի Կաթողիկոսին: Պատասխան չկայ: Անցան օրեր: Նորից մի մեծ բողոք և՛ գրում, որի մէջ, ի միջի այլոց, արտայայտում եմ այն միտքը, թէ այս բոլոր անդամութիւնը մենք առանում ենք: ի պատիւ իրեն, Վեհափառի, որին խօսք էինք աւել չի ամաժարւելու պաշտօնավարութիւնից...

Ոչ պատասխան և ոչ մի որեէ կարգագրութիւն:

Ասենք թէ քահանան, Կոնսիստորիականը, Սինօպականը՝ իրար պակասութիւնները լաւ ճանաչելով պաշտպանում են միմիանց: բայց անհասկանալի է մնում, զոնէ ինձ համար, ինչ օգուտ ունի Կաթողիկոսը, որ այդ բոլորի վրայ մատների արանքով է նայում: կամ եթէ նա, Վեհափառը, ներում է մէկին, ինչու միենո՞ն ժամանակ չի ստիպում յետ գարճնել այդ մէկի իւրացրած զումարները, ինչպէս այս հաշում մէջ ցոյց տւած գէպում:

Վերջ ի վերջով համոզւեցի, ժողովաւրգը՝ ժողովրդութիւն չի անում, աէրտէրը՝ տէրտէրութիւն, վարդապէտը՝ վարդապետութիւն, եպիսկոպոսը՝ եպիսկոպոսութիւն և այն:

Հետաքրքին այն է, որ Տէր-Գրիգորը*) և Տէր-Յակովը (Կոնսիստորիայի անդամ) մեծ ախորժակ էին ցոյց տալիս երեցփոխ լինելու: Էլ ևս ինչ երեցփոխանութիւն կարող էի այնահետ անել:

Կարգագրամիան երկար սպասելուց յետոյ, զրեցի մոմարդկու և զրամարկցիս երեք բանապիները փակէտի մէջ, աղարկեցի էջմիածին՝ Նորին Սրբութեան Վեհափառ Հայրապետ և Կաթողիկոս ամենայն Հայոց Մատթէոս Ա-ի անունով**) և ընդ միշտ պատ ճամարեցի ինձ իմ երեցփոխանութիւնը պաշտօնից:

Ահա տարին լրանում է, ինչ որ ևս թողել եմ երեցփոխանական պաշտօնաւ: Գնացէք ո, Լուսուորիչ եկեղեցի և Զեր աշքով սուսպեցէք նրա զրութիւնը: կարելի է ես, յարգելի լնթերցող, սիստեցնում եմ Զեզ: Ես իմ պարագու կատարել եմ:

Աւելորդ չեմ համարում յիշելու և հետեւելը, բացի սպասնալիքներից՝ բէլօլիք-խանչալից՝ հոգեսորականները ուրիշ միջացով էլ էին ինձ սարսափի ենթարկում...

Սինօղը ինձ վրայ գանգատ էր տւել զատարան, որ ևս մի վարմունք «յուղայական մատնութիւն» էի անուանել, (առև հաշուէտեարիս № 8):

*) Իմ հեռանալուց յետոյ այս քահանան Յ-4 ամիս ինքնակամ երեցփոխանութիւն արաւ: Խպատակին հասաւ:

**) Որպէս զի շատերին անհասկանալի ջնայ իմ այս վերջին վարժումքս, պարտա եմ համարում բացազրեաւ: ա) մանր հրաժարել էինք այնունեաւ Կոնսիստորիայի կամ Ախնօղի նու մի որեւէցէ յարաբերութիւն պահպանելուց: բ). Երեւանի թեմը մինչեւ այդ ժամանակ առաջնորդ չուներ: գ), որ ամենազիաւրն է, ինքը, Կաթողիկոսը, համարում է կանոնով Առաջնորդ Երեւանայ թեմի եւ դ), մենք ճրաման ունէինք պատցած Կաթողիկոսից, նարիւուր գէպերեւմ իրեն զիմելու:

Տէր-Գրիգորը նմանապէս որ ես այդ «արդար»
մարզուն զրավարակել էի:


Տէր-Ղեռնդն էլ զանգատ էր տաել քաղաքիս ոստի-
կանապետին, որ ես, իրբե թէ մի քահանայի, որին հս
տուն չեմ թողնում, ուզարկել էի եկեղեցի անկարգու-
թիւններ անելու, որպէս զի այդ օրը Կայսրունի Մա-
րիա Ֆէօդորովնայի մաղթանքը իրբ խանգարել առջի...

Ուզում էին գցել ինձ սարսափելի պատասխանա-
ւութեան տակ:

Իսկ գէպքն այսպէս է եղել. այդ երկու քահանանե-
րը, եկեղեցում, պատարագի սկզբին իրար հայնոյել,
միրուքներից քաշքշել և խըրել էին. Իսկ ես ոչ միայն
այդ օրը այլ և ամբողջ երկու տմիս եկեղեցի չե-
զուում, որպէս զի մեր քահանաների անկարգութիւննե-
րը չափանի: Իսկ իմ տեղ դրել էի ժամանակաւորապէս
և Կոնսիստորիայի գիտութեամբ. պ. Յովհաննէս Վար-
դանեանին:

Դ. ՊԱՊՈՎ






3728

«Ազգային գրադարան



NL0030882



26.06